Կարծիք

Արմեն Հոկտեմբերի Ասատրյանի «Հայ առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմը խորհրդային տարիներին (1921-1991 թթ.)» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Քրիստոնեության ընդունումից ի վեր հայոց եկեղեցու պատմությունը հանդիսանում է հայ ժողովրդի պատմության կարևորագույն և առանցքային մասերից մեկը: Առանց եկեղեցու պատմության համապարփակ ուսումնասիրման անհնար է պատշաճ պատկերացում կազմել հայոց պատմության բազմաթիվ դրվագների, իրադարձությունների, գործընթացների, անգամ ամբողջական ժամանակաշրջանների վերաբերյալ: Այս համատեքստում խիստ կարևորվում է ինչպես Մայր Աթոռի և հայոց եկեղեցու մյուս նվիրապետական աթոռների գործունեության հետազոտումը, այնպես էլ առանձին թեմերի պատմության ուսումնասիրումը: Հայոց եկեղեցու թեմերը դարեր շարունակ առանցքային նշանակություն են ունեցել տվյալ երկրի հայկական համայնքի ինքնակազմակերպման, հայապահպանության հարցերում, ինչպես նաև կրթամշակութային կյանքում: Հայտնի փաստ է, որ հայոց եկեղեցին հոգևոր–կրոնական առաքելությունից զատ ստանձնել է նաև աշխարհիկ մի շարք գործառույթներ:

1918 թ. հայկական պետականության վերականգնումից հետո անգամ չնվազեց հայոց եկեղեցու վերը նշված գործառույթները: Հայոց եկեղեցին նոր մարտահրավերների առջև կանգնեց Հայաստանում և հարևան մի շարք երկրներում խորհրդային կարգեր հաստատելուց հետո: Ցեղասպանություն վերապրած հայության բեկորները կարիք ունեին հենարանի ու աջակցության նոր կյանք սկսելու և ձուլումից խուսափելու համար: Այս ամենում անշուշտ հսկայական առաքելություն էր վերապահված եկեղեցուն իր կառույցներով հանդերձ: Սակայն խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Խորհրդային Միությունում սկսված հակաեկեղեցական և հակակրոնական քաղաքականության արդյունքում հայոց եկեղեցին, այլ կրոնական կառույցների նման, հայտնվեց ճգնաժամի մեջ: Գոյությունը պահելու համար

եկեղեցին պետք է հաղթահարեր բազում մարտահրավերներ՝ միաժամանակ փորձելով անել հնարավորը խորհրդային երկրներում անաստվածության ու աթեիզմի տարածման համակարգային քաղաքականությանը հակազդելու համար:

Արմեն Ասատրյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Վիրահայոց թեմի գործունեությանը հենց այդ բախտորոշ տարիներին՝ 1921-1991 թթ.: Վիրահայոց թեմը հայոց եկեղեցու հնագույն թեմերից մեկն է: Անհնար է պատկերացնել վիրահայոց պատմությունն առանց Վիրահայոց թեմի մասնակցության: Հայոց եկեղեցին խորհրդային տարածքի մյուս կրոնական հաստատությունների հետ «ճաշակեց» կոմունիստական գաղափարախոսության հակաեկեղեցական քաղաքականության պտուղները: Վիրահայոց թեմի դրությունը, թերևս, ավելի անբարենպաստ պայմաններում էր գտնվում, քանզի կոմունիզմի հակաեկեղեցականությանը, հաճախ միախառնվում էր նաև վրացական գործիչների հակահայկականությունը:

Այս հիմնախնդիրների շրջանակն էլ փորձել է ներկայացնել իր ատենախոսության մեջ Արմեն Ասատրյանը: Նշենք, որ սա առաջին փորձն է մեկ ընդանուր աշխատության մեջ ի մի բերել խորհրդային շրջանի Վիրահայոց թեմի պատմության առանցքային հարցերը: Աշխատանքի երեք գլուխները բաժանված են թեմի պատմության ժամանկագրական զարգացման տրամաբանությամբ: Աշխատանքին կցված են հավելվածներ, որոնք թեմի պատմության համար առանցքային նշանակություն ունեցող արխիվային փաստաթղթեր են՝ հիմնականում կաթողիկոսական կոնդակներ, գրություններ: Հատկապես կարևոր ենք համարում Հավելված 1–ը, ուր ամփոփ ներկայացված են Վիրահայոց թեմի գործող եկեղեցիների ցանկը:

Սեղմագրում ներկայացված ատենախոսության թեմայով հրատարակված 9 հոդվածներն ավելի լայնորեն են արտահայտում ատենախոսության գլուխների և ենթագլուխների բովանդակությունը:

Հեղինակն աշխատանքը շարադրելիս, բացի մասնագիտական գրականությունը և գիտական հրապարակումները, կարևոր տեղ է

հատկացրել ախիվային նյութին, մասնավորապես այն վավերագրերին, որոնք պահվում են Հայաստանի ազգային արխիվում:

Ներկայացվող նյութի նկատմամբ ատենախոսի կողմից հիմնականում ցուցաբերվել է քննական ու վերլուծական մոտեցում, թեև առանձին հատվածներ շարադրելիս այս սկզբունքը չի պահպանվել: Աշխատանքի գիտական ապարատը, ընդանուր առմամբ, համապատասխանում է ներկայացվող պահանջներին:

Այսպիսով, Արմեն Ասատրյանի ատենախոսությունը հանդիսանում է կարևոր գիտական հետազոտություն և պարունակում է որոշակի գիտական նորույթ: Այն իր կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին:

Ներկայացնենք նաև մի շարք դիտարկումներ և առաջարկություններ.

1. Նախ, կարծում ենք, որ ատենախոսության ժամանակային ընդգրկումը բավականին մեծ է: Հաշվի առնելով թեկնածուական ատենախոսությունների ծավալային սահմանափակումները՝ մեկ աշխատանքի շրջանակներում փորձել ներկայացնել Վիրահայոց թեմի գործունեությունը ողջ խորհրդային ժամանակաշրջանում բավականին բարդ է և հնարավորություն չի տալիս մի շարք խնդիրներ ներկայացնել համակողմանի և պատշաճ խորությամբ:
2. Ատենախոսը աշխատանքի Ներածության «Գիտական նորույթը և գործնական նշանակությունը» ենթաբաժնում գրում է, որ առաջին անգամ շրջանառության մեջ են դրավում փաստագրական, պատմագիտական գրականություն և տարբեր նորահայտ վավերագրեր: Եթե նորահայտ վավերագրերի մասով ամեն ինչ պարզ ու հասկանալի է, ապա բացարձակ պարզ չէ թե ինչ է նշանակում գիտական շրաջանառության մեջ դնել արդեն իսկ հրատարակված պատմագիտական գրականությունը, քանզի դրանք, հրապարակված լինելով, արդեն իսկ գտնվում են գիտական շրջանառության մեջ:
3. Ատենախոսությունը կշահեր և ներկայացված նյութն ավելի ամբողջական կդառնար, եթե հեղինակն անդրադառնար նաև մի

շարք կարևոր հիմնախնդիրների ևս, մասնավորապես վրաց եկեղեցու և հայոց թեմի հարաբերություններին (աշխատանքում հիշատակումներ կան միայն մի քանի փոխայցելությունների մասին), ցույց տրվեր թե արդյոք վրացական խորհրդային իշխանությունները տարբերակում դնում էին վիրահայոց թեմի, այլ կրոնական կառույցների և վրաց եկեղեցու դեմ իրականացվող հակակրոնական և հակաեկեղեցական քաղաքականության մեջ: Նման համեմատությունները անունշտ ավելի համակարգային և բազմակողմանի կդարձներ ատենախոսության մեջ քննարկված հիմնահարցերը:

4. Ատենախոսությունը կշահեր եթե հեղինակն օգտագործեր վրացական արխիվներում պահվող վավերագրերը, ինչպես նաև խորհրդային Վրաստանի ժամանակի մամուլը: Տարօրինակ է, որ ատենախոսը աշխատանքի ներածական մասում /էջ 12/ պնդում է, որ աշխատանքը շարադրելիս օգտագործվել են վրացական մի շարք թերթեր, ինչպես օրինակ «Սովետական Վրաստան», «Պրոլետար» և այլն, սակայն թե՛ գրականության ցանկում և թե՛ հղումներում վրացական թերթերի անուններն ուղղակի բացակայում են: Վրացական թերթերի անունները հիշատակված են ընդամենը մեկ հղման մեջ 104 էջում, որտեղ նշված չեն թերթերի ամսաթվերը, համարները և այլն:
5. Կարծում ենք ատենախոսության մեջ քննարկվող հիմնախնդիրները բազմակողմանի ներկայացնելու տեսանկյունից կարևոր է թեմային վերաբերող վերջին հրատարակությունների օգտագործումը, մասնավորապես խոսքը գնում է 2025 թ. Լոնդոնում լույս տեսած Felix Corley «Catholicos and Commissar: The Armenian Church Under the Soviet Regime» մեծածավալ աշխատությունը երկու հատորներով:
6. Ատենախոսության 2-րդ գլխի առաջին ենթագլխում՝ վերնագրված «Վիրահայոց թեմը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին», հեղինակը հիմնականում ներկայացնում է Մայր Աթոռի գործունեությունը այդ տարիներին՝ կատարելով մեկ–երկու

անդրադարձ Վիրահայոց թեմին, այն ինչ ենթադրվում է, որ տվյալ բաժնում հիմնականում պետք է ներկայացվեր թեմի գործունեությունը:

7. Ատենախոսության շարադրանքում առկա են իրար հաջորդող պարբերություններ, որոնք բացարձակապես միմյանց հետ չեն գտնվում տրամաբանական կապի մեջ, տե՛ս էջ 20, 39, 66, 67 և այլն:
8. Ատենախոսության 2-րդ գլխի երկրորդ ենթագլուխն ունի տարեգրության բնույթ, այսինքն հեղինակը ժամանակագրական հերթականությամբ ներկայացնում է թեմում տեղի ունեցած զանազան, հաճախ ոչ էական նշանակություն ունեցած, իրադարձություններ և քիչ են կատարված համապատասխան վերլուծություններ: Նշենք նաև, որ նույն ենթագլխի զգալի մասը՝ էջ 81-90–ը, շարադրված է հիմնականում մեկ աղբյուրի՝ Մայր Աթոռի «Էջմիածին» պաշտոնաթերթի հայտնած տեղեկությունների հիման վրա: Նույնը կարելի է ասել ատենախոսության 3-րդ գլխի առաջին ենթագլխի որոշ մասի վերաբերյալ, տե՛ս էջ 91-103:
9. Տեքստի որոշ էջերում ներկայացված են փաստեր և տեղեկություններ առանց աղբյուրի հղմամբ, տե՛ս էջ 31, 36-38, 42 և այլն:
10. Կարծում ենք գիտական ատենախոսությունների համար պատշաճ չեն facebook կամ wikipedia հարթակներից հղումներ անելը: Խիստ անհրաժեշտության դեպքում է պետք կատարել նման հղումները, նման պարագայում էլ անհրաժեշտ է պահպանել էլեկտրոնային ռեսուրսներին հղման պատշաճ և ընդունված ձևաչափերը:

Վերը նշված առաջարկներն ու դիտարկումները բխում են ատանախոսության շահերից և հաշվի առնելու պարագայում կհանդիսանան օգտակար շտկումներ աշխատանքի հետագա հրատարակման ժամանակ:

Այս ամենով հանդերձ, կարծում ենք, որ Արմեն Հոկտեմբերի Ասատրյանի «Հայ առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմը խորհրդային տարիներին (1921-1991 թթ.)» խորագրով ատենախոսությունը հիմնականում համապատասխանում է Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման պահանջներին, ուստի հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Գրախոս
պ.գ.թ., դոցենտ Է.Հովհաննիսյան

Հաստատում եմ Է.Հովհաննիսյանի ստորագրությունը
Հ. Թադևոսյան
Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական քարտուղար, մ.գ.թ., դոցենտ

30.01.2026